ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նոյեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած հայ մեծանուն նկարիչ Վարդգես Սուրենյանցի 150-ամյակին նվիրված գիտաժողով:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը*:*

Գիտաժողովի առաջին բանախոս՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանն *անդրադարձավ Վ. Սուրենյանցի և Սանկտ Պետերբուրգի «*Мир искусства*» գեղարվեստական միավորման առնչություններին: Դրանք ներկայացնելով հայ նկարչի կենսագրության և գեղագիտական նախասիրությունների համատեքստում՝ զեկուցողը զուգահեռներ անցկացրեց Սուրենյանցի և «միրիսկուսնիկների» ինչպես գեղանկար, այնպես էլ գրաֆիկական երկերի միջև: Հայաստանի ազգային պատկերասրահի գիտաշխատող* Վիկտորյա Բաղալյանը *«Սուրենյանցի նորահայտ ստեղծագործությունները Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում» զեկուցման մեջ ներկայացրեց իր իսկ ջանքերով հայտնաբերված և ուսումնասիրված մի շարք անհայտ, չհրատարակված գրաֆիկական թերթեր: Սուրենյանցի վրձնին պատկանող այս գործերի շարքում են Լ. Ուլանդի «Երգչի անեծքը» բանաստեղծության ձևավորումը (1882 թ.), «Հանդեսի շապիկի ձևավորման էսքիզը» (1889 թ.), մոդեռն ոճով արված «Էրմիտաժ» թատրոնի ծրագրի ձևավորման էսքիզը: Վ. Բաղալյանը ներկայացրեց նաև ստուգաբանության արդյունքում հայտնաբերված «Փոքրիկ Ֆավնոս» գեղանկարը: Վ. Սուրենյանցի թողած հարուստ տեսական ժառանգությունը գեղագիտական տեսանկյունից քննեց փիլիսոփայության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* Յակով Խաչիկյանը *(ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)՝ շեշտելով հետևյալ դրույթները. «Իր հոդվածներում Վ. Սուրենյանցն ուշադրություն է դարձրել առավելապես արվեստի զարգացման օրինաչափությունների հետ կապված հարցերին: Նկարչին մշտապես հուզող հարցերից մեկը գեղարվեստական մեթոդի, գեղարվեստական ուղղության հարցն էր, որը նա սովորաբար անվանում էր ոճ: Ռեալիզմը համարելով մեծ առաջադիմություն՝ Վ. Սուրենյանցը քննադատաբար է մոտենում սրան նախորդող ոճերին (այսինքն՝ մեթոդներին)»: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող* Գարեգին Քոթանջյանի *բանախոսության առանցքը Սուրենյանցի գեղանկարչական լեզվի զարգացումն էր: Դիտարկելով նկարչի ստեղծագործական ողջ ուղին՝ արվեստաբանն առանձին օրինակների օգնությամբ ցույց տվեց այն փոփոխություններն ու զարգացումները, որոնք բնականորեն կրել է սուրենյանցական արվեստը:*

Պրոֆեսոր Արարատ Աղասյանը *խոսեց «Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին»: Համեմատելով նկարչի կորսված նկարների վերաբերյալ մամուլում պահպանված երկու նկարագրություն՝ բանախոսը եզրակացնում է, որ դրանք վերաբերում են Վ. Սուրենյանցի միևնույն մեծադիր կտավին: Ցեղասպանության, բռնությունների դեմ ուղղված իր այս կտավի շրջանակին պատկերելով հեծանիվներ ու էլեկտրական մեքենաներ, նկարիչը ցանկացել է կտավին «տալ հրապարակախոսական առոգանություն, պլակատային շեշտակի հնչում»: Դրանով իսկ փորձել է ամոթահարել արևմտյան քաղաքակիրթ հանրությանը՝ հեծանիվների ու էլեկտրական մեքենաների գյուտարարներին, որոնց անտարբեր հայացքի ներքո սուլթան Համիդը մի ողջ ազգ էր բնաջնջում: Բանախոսը, միաժամանակ, կոչ արեց հետամուտ լինել այդ խոշորագույն նկարի հայտնաբերմանը և ի ցույց դնել Հայաստանի ազգային պատկերասրահում: «Ճարտարապետությունը Սուրենյանցի ստեղծագործական ժառանգության մեջ» զեկուցմամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի առաջատար գիտաշխատող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր* Դավիթ Քերթմենջյանը *ներկայացրեց նկարչի՝ ճարտարապետության թեմաներով հոդվածները՝ հատկապես բարձր գնահատելով էջմիածնի վերականգնման խնդիրների արծարծումը՝ որպես հայկական ռեստավրացիոն պրակտիկայի առաջին քայլերից մեկը: Զեկուցողը նաև ընդգծեց, որ Վ. Սուրենյանցի կտավների միջավայրի պատկերումը ոչ միայն հայկական, այլ նաև միջազգային պատմական գեղանկարչության օրինակելի նմուշներից է: Վ. Սուրենյանցին նվիրված գրքի հեղինակ, Գևորգ Գևորգյանի (Ջոտտո) թանգարանի տնօրեն* Մարտին Միքայելյանը *խոսեց Սուրենյանցի՝ տարբեր ուղղությունների, ոճերի մեջ համակրությունների, կողմնորոշումների մասին: Հայ նկարչի ստեղծագործությունները համեմատվեցին համաշխարհային արվեստագետների կերտվածքների հետ: Հատկապես ժամանակաշրջանի գեղանկարիչների համեմատությամբ շեշտվեց Սուրենյանցի՝ ակադեմիական ուղղություններից դուրս գալու, ժամանակի արվեստի լեզվի բարձր մակարդակով արտահայտվելու ջանքերը: Հայաստանի ազգային պատկերասրահում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող Սուրենյանցի՝ Քրիստոսին նվիրված վեց ստեղծագործություններին անդրադարձավ Երևանի պետական համալսարանի դասախոս* Սաթենիկ Վարդանյանը*:*

Գիտաժողովը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանի *ելույթը: «Երաժշտական անդրադարձները Սուրենյանցի նամակներում» թեմայով բանախոսության մեջ նա բացահայտեց նկարչի և ականավոր հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի բարեկամական ու ստեղծագործական սերտ կապերը: Վ. Սուրենյանցը ոչ միայն հուշել է Ալ. Սպենդիարյանին օպերա ստեղծել Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա, այլ նաև կոմպոզիտորին ոգևորելու նպատակով դեռ չգրված գործի համար բեմական նկարներ է կերտել:*

Վ. Սուրենյանցի 150-ամյակին նվիրված գիտաժողովի արդյունքներն ամփոփեց Ա. Աղասյանը:

ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ